ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ֆինանսների նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչության փորձագետ Կարապետ Շաքարյանի

Ես՝ Կարապետ Շաքարյանս, ՀՀ ֆինանսների նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչությունում որպես փորձագետ աշխատում եմ 2020թ. փետրվարի 11-ից (2020թ. փետրվարի 10-ին կնքված N 9 պայմանագրի համաձայն):

2020թ. օգոստոսի 11-ից մինչև փետրվարի 11-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. ՀՀ վարչապետի 2020թ. փետրվարի 10-ի N 169-Ա որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման նկատմամբ 2020թ հսկողության տարեկան ծրագրերով նախատեսված առանձին ստուգումների իրականացման նպատակով կազմակերպել եմ ՀՀ ֆինանսների նախարարության բյուջետային գործընթացի կազմակերպման վարչությունում, ՀՀ ֆինանսների նախարարության «Գանձապետական համակարգի LS Finance և GANDZ ծրագրեր (Գանձապետական գործառնական օր (ԳԳՕ) ծրագրային համակարգ)», «Գնումների վերաբերյալ տեղեկատվական բազա», «50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային և պետական ոչ առևտրային կազմակերպությունների տեղեկատվական բազա» տվյալների շտեմարաններում առկա, ինչպես նաև երրորդ անձանցից ստացված տեղեկատվության նախաստուգումային վերլուծությունների գծով տարվող աշխատանքները, որը հնարավորություն է տվել մինչև ստուգում սկսելը, գնահատել ստուգման ենթակա կազմակերպություններում հնարավոր ռիսկերը և բացահայտել առկա անհամապատասխանությունները:

2. Կազմակերպել եմ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման նկատմամբ հսկողության 2020 թվականի ծրագրով նախատեսված առանձին կազմակերպություններում ստուգումների իրականացման համար անհրաժեշտ հարցաշարերի (ծրագրերի) մշակման աշխատանքները:

3. Մեթոդական և գործնական օժանդակություն եմ ցուցաբերել 2020 թվականի ծրագրով նախատեսված ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունում, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում ստուգումներ, ինչպես նաև «ԱՅԲ» կրթական հիմնադրամում, «Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ում և

«Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ-ում հանդիպակաց ստուգումներ իրականացնող ստուգող խմբերին:

4. Մասնակցել եմ ՀՀ պետական բյուջեի կատարման նկատմամբ հսկողության 2021 թվականի ծրագրի նախագծի մշակման աշխատանքներին և ներկայացրել իմ առաջարկությունները:

5. Հաշվետու ժամանակահատվածում մասնակցել եմ Վարչության ընթացիկ գործունեության հետ կապված ՀՀ վարչապետի, ՀՀ ֆինանսների նախարարի հանձնարարականների, ինչպես նաև Վարչության ընթացիկ գործունեության հետ կապված այլ հանձնարարականների կատարման աշխատանքներին:

6. Ապահովել եմ վարչության պետի կողմից տրված ընթացիկ հանձնարարականների կատարումը:

Ֆինանսաբյուջետային վերահսկողության
վարչության փորձագետ Կարապետ Շաքարյան